ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2018թ. հունիսի 18 N 59

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿՈՄԻՏԱՍ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԻՍԱ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Լեհաստանի Հանրապետության Նիսա քաղաքի քաղաքապետի 2018 թվականի մայիսի 7-ի հրավերը՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Կոմիտաս Սաֆարյանին 2018 թվականի հուլիսի 5-ից 16-ը ներառյալ գործուղել Լեհաստանի Հանրապետության Նիսա քաղաք՝ «Թալինի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց տրամադրված բժշկական սարքավորումների տեղափոխման աշխատանքները կազմակերպելու համար :
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել փոխտնօրեն Ազնիվ Թորոսյանի վրա:
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Կոմիտաս Սաֆարյանին՝ Լեհաստանի Հանրապետություն կատարած գործուղման ծախսերի վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ